ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ

Հիմնաբառեր. *համավարակ, համաշխարհային սպորտ, կորուստներ, օլիմպիադա, ֆուտբոլ, բասկետբոլ, հոկեյ*

Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1995 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Էկոնոմիկայի պետական կարգավորում» մասնագիտությամբ, 1998 թ.՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան: 1999 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2013 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2016 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն: Դասախոսում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 70 գիտական հոդվածների ու զեկույցների:

Հոդվածում փորձ է արվել վերլուծելու և գնահատելու համաշխարհային սպորտի ֆինանսական կորուստները կորոնավիրուսային համավարակի պայմաններում: Հաշվի առնելով մարզական ոլորտի ընդգրկուն բնույթը՝ հեղինակն իր դիտակետում է պահել 2020 թվականին նախատեսված հիմնական մարզական իրադարձությունները՝ Տոկիոյի օլիմպիական խաղերը և ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը, ինչես նաև գնահատել է բասկետբոլի, ֆուտբոլի և տափօղակով հոկեյի ազգային առաջնությունների կրած վնասներն ու առկա մարտահրավերները:

Աշխարհը «գրաված» COVID-19 համավարակի ազդեցության չափի ու ընդգրկման ծավալների մասին հրապարակվում են ու կշարունակվեն հրապարակվել հարյուրավոր և, նույնիսկ, հազարավոր վերլուծություններ, կտրվեն գնահատականներ և կկատարվեն կանխատեսումներ: Բնավ չթերագնահատելով իրականացված և/կամ իրականացվող հետազոտությունների հիմնավորվածությունն ու իրատեսականությունը՝ հակված ենք կարծելու, որ արտաքին գործոնի (տվյալ դեպքում՝ համավարակի) վարքագծի անկանխատեսելիության և հետագա տարածման ծավալների անորոշություն պայմաններում հնչեցված գնահատականները, մեղմ ասած, չափազանց մոտավոր են անգամ կարճաժամկետ հատվածի համար: Հավելենք, որ տվյալ արտաքին գործոնը, «օժտվելով» նաև ներքին գործոնի կարգավիճակով, համավարակի հետևանքների մեղմման կամ չեզոքացման հարցը դարձնում է օրախնդիր:

Եվ ամենևին էլ պատահական չէ, որ Օքսֆորդի համալսարանի Մարդկության ապագայի ինստիտուտի (Fu-

ture of Humanity Institute) գիտնականները, համադրելով տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկությունները, փորձում են կանխատեսել կորոնավիրուսի տարածման ընթացքը տարբեր երկրներում:

Ըստ մոդելավորման, օրինակ, համավարակի գագաթնակետին Հայաստանում կարող է վարակվել 43-140 հազար մարդ կամ բնակչության 1.5-4.7 տոկոսը, իսկ մինչև 2021 թվականը վարակվածների թիվը կարող է տատանվել 1.3 միլիոնից մինչև 2.3 միլիոնի կամ բնակչության 44-80 տոկոսի սահմաններում[1]:

Ինչքան երկար տևի համավարակը, այնքան խորն է լինելու վերջինիս ազդեցությունը տնտեսության վրա, և այդքան մեծ պետք է լինեն իշխանությունների աջակցության ջանքերը: Որքան երկար շարունակվի համաճարակը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ աշխարհը կփոխի կամ կարող է փոխել իր սպառողական վարքագիծը: Սա նույնպես պետք է հաշվի առնել հակաճգնաժամային ռազմավարություններ և մարտավարություններ մշակելիս[2]:

Կորոնավիրուսի համավարակի վտանգը ստիպեց բազմաթիվ երկրների կառավարությունների ներմուծել աննախադեպ կանխարգելող միջոցառումներ, որոնք էականորեն սահմանափակում են տնտեսական գործունեությունը: Դեռ մի քանի շաբաթ առաջ միջազգային կառույցները կարծիք էին հայտնում, որ համաշխարհային տնտեսական աճը կդանդաղի 1-2 տոկոսային կետով, մինչդեռ այսօր գերակշռում են այն գնահատականները, ըստ որոնց՝ խոշորագույն տնտեսություններում տարեկան անկումը կարող է լինել երկնիշ (եթե երեք ամիս շարունակ արձանագրվի 40% անկում, ապա տարեկան հաշվարկով դա կկազմի մոտ 10%): Սա, իհարկե, չափավոր ազդեցության սցենարի պարագայում, այնինչ վատագույն սցենարներում այդ ցուցանիշը կարող է ավելի մեծ լինել[3]:

Հենց այս համատեքստում էլ փորձել ենք գնահատել COVID-19-ի բացասական ազդեցությունը համաշխարհային սպորտի ինդուստրիայի վրա: Իհարկե, ներկայացված վերլուծությունը չի հավակնում տալ բոլոր հարցերի պատասխանները, առավել ևս, կանխատեսումներ կատարել այս ասպարեզի հետագա զարգացումների վերաբերյալ:

Կորոնավիրուսը լարվածության մեջ է պահում նաև մարզաշխարհը: Համավարակը խաթարել է տարբեր մրցաշարերի բնականոն ընթացքը: Դրա պատճառով հետաձգվել ու հետաձգվում են մարզական բազմաթիվ խոշոր մրցաշարեր[4]:

Կորոնավիրուսն արդեն իսկ աննախադեպ վնաս է հասցրել պրոֆեսիոնալ սպորտին. մինչև 2021 թվականը պաշտոնապես հետաձգվել են Տոկիոյի օլիմպիական խաղերը[5], ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը[6], չեմպիոնների լիգան[7], տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությունը, փաստացիորեն՝ բոլոր մարզաձևերի ազգային առաջնությունների գերակշիռ մասը և այլն[8]:

Այս հոդվածի շրջանակում ընտրվել են 2020 թվականին համաշխարհային սպորտում կայանալիք իրադարձություններից

[1] Մոդել. «վերին կետում» ՀՀ-ում կարող է վարակվել մարդկանց մինչև 4.7%-ը, https://mediamax.am/am/news/society/37128/

[2] Նոր աշխարհի մարտահրավերները. նախկին փոխարտգործնախարար Ռոբերտ Հարությունյան, https://news.am/arm/news/568403.html

[3] Մանուկ Հերգնյան. Նոր տնտեսական իրականությունը և մեր պատասխանը, https://banks.am/am/news/interviews/18854 25.03.2020

[4] Կորոնավիրուսը և սպորտը. ինչ իրավիճակ է մարզաշխարհում, https://www.shantnews.am/news/view/625877.html

[5] Coronavirus cancellations and reactions in sports, https://www.espn.com/espn/story/_/id/28871525/coronavirus-cancellations-reactions-sports

[6] UEFA postpones EURO 2020 by 12 months; https://www.uefa.com/uefaeuro-2020/news/025b-0ef35fa07210-adb-80b5eb2e7-1000--uefa-postpones-euro-2020/

[7] https://www.uefa.com/uefachampionsleague/

[8] Коронавирус остановил большой спорт. Олимпиаду и Евро-2020 могут перенести на год, https://www.bbc.com/russian/features-51860899

առավել խոշորները՝ միջոցառումների չեղարկման հետևանքով բոլոր մարզաձևերի գծով ֆինանսատնտեսական գնահատական տալու անհնարինության պատճառով: Ավելին, մեր արձանագրած գնահատականներն ունեն ուղղորդիչ, մոտավոր բնույթ, և զարգացման տարբեր սցենարների պարագայում դրանք կարող են էապես փոխվել:

Այսպիսով՝ 2020 թվականի խոշորագույն մարզական իրադարձության՝ Տոկիոյի ամառային օլիմպիական խաղերի չեղարկումը (հետաձգումը) բազմավեկտոր վնասներ հասցրեց ինչպես կազմակերպիչներին, այնպես էլ ամենատարբեր շահառուների: Մասնավորապես՝ այս իրադարձության չեղարկման հետևանքով կորուստներ կրած մարդկանց քանակը համարյա 100000 է, այդ թվում՝ օլիմպիական մարզիկներ՝ 11000, պարաօլիմպիական մարզիկներ՝ 4400, չվճարված կամավորներ՝ 80000 անձ[9]: Հատկանշական է, որ այստեղ ընդգրկված չեն օլիմպիական խաղերին անուղղակիորեն մասնակից այլ անձինք, այդ թվում՝ արտասահմանից: Ակնհայտ է, որ այդ դեպքում կորուստները բազմակի կլինեն:

Ըստ ոլորտների (հասցեատերերի) անդրադառնալով օլիմպիադայի չեղարկման (հետաձգման) հետևանքով հնարավոր եկամուտների կորուստներին՝ արձանագրենք, որ, թեև մոտավոր, սակայն գնահատվել են նաև այդ կորուստների «հասցեատերերը»: Մասնավորապես՝ օլիմպիադայի կազմկոմիտեի կորուստները կազմում են 603 մլրդ[10], Տոկիոյի քաղաքային իշխանությանը՝ 597 մլրդ, Ճապոնիայի գործարար հատվածինը՝ 348 մլրդ, իսկ կենտրոնական կառավարությանը՝ 150 մլրդ իեն (գծապատկեր 1):

Ընդ որում, օլիմպիական խաղերի նախապատրաստական աշխատանքների համար արդեն իսկ ծախսվել է, ընդհանուր առմամբ, 13400 մլն ԱՄՆ դոլար, որից միայն 277 մլն-ը՝ նոր օլիմպիական մարզադաշտի կառուցման նպատակով:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տոկիոյի 2020 թվականի ամառային օլիմպիադայի չեղարկման (հետաձգման) հետևանքով հնարավոր եկամուտների կորուստները՝ ըստ ոլորտների (հասցեատերերի) (մլրդ իեն, մարտ, 2020 թ.)

[9] Համաշխարհային սպորտին վերաբերող տվյալները, այդ թվում՝ գծապատկերներում առկա ցուցանիշները վերցված են հետևյալ աղբյուրից.Coronavirus (COVID-19) disease pandemic effect on the sports industry - Statistics & Facts; Published by Christina Gough, Mar 19, 2020, https://www.statista.com/topics/6098/impact-of-the-coronavirus-on-sport/

[10] Մեկ ԱՄՆ դոլարը հավասար է մոտ 108 ճապոնական իենի: Աղբյուրը՝ https://ru.investing.com/currencies/usd-jpy



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Տոկիոյի 2020 թվականի ամառային օլիմպիադայի չեղարկման (հետաձգման) հետևանքով գովազդային գործունեության և հովանավորչական պայմանագրերի գծով հնարավոր կորուստները 2020 թ. մարտի դրությամբ (մլն ԱՄՆ դոլար)

Հնարավոր եկամուտների չստացման և/կամ կորուստների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում գովազդային գործունեությանն ու հովանավորչական ծախսերին առնչվողները: Այսպես՝ 2020 թ. մարտի դրությամբ, օլիմպիադայի կազմակերպիչների հնարավոր կորուստները շուրջ 2,3 մլրդ ԱՄՆ դոլար են, այդ թվում՝ ավելի քան 70 տեղական ընկերությունների հետ հովանավորչական պայմանագրերից հնարավոր կորուստները՝ 900 մլն, իսկ գովազդների մասով կորուստները՝ 1250 մլն ԱՄՆ դոլար (գծապատկեր 2): Ընդ որում, այստեղ հաշվարկված չեն հեռարձակման իրավունք ձեռք բերած հեռուստաընկերությունների կորուստները, որոնք, անշուշտ, կգնահատվեն հարյուրավոր միլիոններով:

Եվ վերջապես, անդրադառնալով Տոկիոյի 2020 թվականի օլիմպիադայի հետ կապված ապահովագրական ծախսերին, կարող ենք արձանագրել, որ ապահովագրական ընկերությունների հնարավոր կորուստները՝ ներառյալ հեռարձակման իրավունքներն ու հովանավորչությունը, կկազմեն շուրջ 2 մլրդ, իսկ հյուրընկալության գծով ծախսերը՝ 600 մլն ԱՄՆ դոլար:

Վերստին ընդգծենք, որ վերոնշյալ հաշվարկները նախնական են՝ ընդգրկելով Տոկիոյի 2020 թվականի ամառային օլիմպիադայի չեղարկման (հետաձգման) հետևանքով առավել ակնառու կորուստները:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

UEFA-ի հնարավոր կորուստները համավարակի հետևանքով Եվրո-2020-ի հետաձգման կամ չեղարկման պատճառով (մլն եվրո)

Մարզական հաջորդ նշանակալից իրադարձությունը, որի չեղարկման (հետաձգման) հետևանքները կարող են ցավագին ազդեցություն ունենալ համաշխարհային սպորտարդյունաբերության վրա, ֆուտբոլի 2020 թվականի Եվրոպայի առաջնությունն է: Հատկանշական է, որ պատմության մեջ առաջին անգամ նախատեսվում էր այս առաջնությունն անցկացնել միաժամանակ 12 երկրում՝ դրանով իսկ մարզական տոն պարգևելով ամբողջ Եվրոպային: Նախնական հաշվարկներով՝ Եվրո-2020-ի հետաձգման կամ չեղարկման պատճառով միայն UEFA-ի հնարավոր կորուստները կազմելու են համապատասխանաբար՝ 300 մլն և 400 մլն եվրո (գծապատկեր 3):

Նույնքան կարևոր է անդրադառնալ նաև ֆուտբոլի Թոփ–5 լիգաների կորուստներին՝ այդպիսով ավելի ամբողջական դարձնելով պատկերը: Վերոնշյալ լիգաների եկամուտների չստացման/կորուստների պատկերը հետևյալն է.

1. Անգլիայի Պրեմիեր լիգա

- խաղի օրվա եկամուտների կորուստներ՝ 180 մլն եվրո,
- հեռարձակման եկամուտների կորուստներ՝ 800 մլն եվրո,
- առևտրային կորուստներ՝ 300 մլն եվրո,
- սեզոնի հետաձգված խաղերի թիվը՝ 92:

2. Իսպանիայի Լա Լիգա

- խաղի օրվա եկամուտների կորուստներ՝ 170 մլն եվրո,
- հեռարձակման եկամուտների կորուստներ՝ 600 մլն եվրո,
- առևտրային կորուստներ՝ 200 մլն եվրո,
- սեզոնի հետաձգված խաղերի թիվը՝ 110:

3. Գերմանիայի Բունդեսլիգա

- խաղի օրվա եկամուտների կորուստներ՝ 140 մլն եվրո,
- հեռարձակման եկամուտների կորուստներ՝ 400 մլն եվրո,
- առևտրային կորուստներ՝ 250 մլն եվրո,
- սեզոնի հետաձգված խաղերի թիվը՝ 74:

4. Իտալիայի Ա Սերիա

- խաղի օրվա եկամուտների կորուստներ՝ 100 մլն եվրո,
- հեռարձակման եկամուտների կորուստներ՝ 450 մլն եվրո,
- առևտրային կորուստներ՝ 150 մլն եվրո,
- սեզոնի հետաձգված խաղերի թիվը՝ 124:

5. Ֆրանսիայի Լիգա 1

- խաղի օրվա եկամուտների կորուստներ՝ 60 մլն եվրո,
- հեռարձակման եկամուտների կորուստներ՝ 200 մլն եվրո,
- առևտրային կորուստներ՝ 140 մլն եվրո,
- սեզոնի հետաձգված խաղերի թիվը՝ 101:

Համավարակի հետևանքով եվրոպա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Համավարակի հետևանքով եվրոպական ֆուտբոլային լիգաների հնարավոր կորուստները (մլն եվրո)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

COVID-19-ի հետևանքով Բասկետբոլի ազգային ասոցիացիայի (NBA) 2020 թ. հնարավոր կորուստները (մլն ԱՄՆ դոլար)

կան ֆուտբոլային լիգաների հնարավոր առավելագույն կորուստները ներկայացված են գծապատկեր 4-ում:

Այժմ անդրադառնանք համաշխարհային սպորտի ևս մեկ ծանրակշիռ մրցաշարի՝ ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային առաջնությանը, որն անցկացվում է Բասկետբոլի ազգային ասոցիացիայի (NBA) հովանու ներքո: 2020 թ. մարտին, երբ մրցաշրջանն ընդհատվեց, NBA-ի 2019-2020 թվականների կանոնավոր մրցաշրջանում դեռևս պետք է ընթանար 259 խաղ: Այս չեղարկումների հետևանքով լիգայի կորուստը կազմեց շուրջ 650 մլն, ԱՄՆ դոլար, այդ թվում՝ հանդիսականների մուտքից համակցված եկամուտների կորուստը՝ 450 մլն (վնասը գնահատվում է 350-450 մլն ԱՄՆ դոլար), իսկ մուտքի տոմսերի հետ չկապված եկամուտների կորուստը՝ 200 մլն ԱՄՆ դոլար (վնասը գնահատվում է 150-200 մլն ԱՄՆ դոլար՝ ներառյալ ապրանքային առևտուրը, սննդի և տրանսպորտային միջոցների կայանման ծախսերը) (գծապատկեր 5):

Եվ, ի վերջո, անդրադառնանք տափօղակով հոկեյի ազգային լիգային (NHL), որը, թերևս, հոկեյի մրցաշարերից ամենաեկամտաբերն է և ներկայացնում է ԱՄՆ-ի և Կանադայի համակցված առաջնությունը: Սեզոնի դադարեցման պահին՝



ԳԾԱՊԱՏԿԵՐ6

NHL-ի շրջանակում թիմերի տնային խաղերի չեղարկման հետևանքով ակնկալվող կորուստները 2020 թ. մարտի դրությամբ (1000 ԱՄՆ դոլար)

2020 թվականի մարտի դրությամբ, NHL-ի թիմերը 41 տնային խաղերից խաղացել էին 32-37-ը: Ենթադրվում է, որ յուրաքանչյուր թիմ միայն տոմսերի վաճառքից ամեն տնային խաղի համար կկորցնի միջինում 1,31 մլն ԱՄՆ դոլար (գծապատկեր 6): Այսպիսով, ըստ յուրաքանչյուր տնային խաղի, կարձանագրվի ֆինանսական կորստի հետևյալ պատկերը.

- տոմսերի վաճառքից եկամտի կորուստ՝ 1312 հազ. ԱՄՆ դոլար,
- սննդի և խմիչքների վաճառք՝ 215 հազ. ԱՄՆ դոլար,
- թիմի ապրանքների վաճառք՝ 86.85 հազ. ԱՄՆ դոլար,
- հովանավորներ և կողային գովազդային վահանակներ՝ 50 հազ. ԱՄՆ դոլար,
- ավտոմեքենաների կայանման վճարներ՝ 16.8 հազ. ԱՄՆ դոլար:

Այսպիսով՝ համաշխարհային սպորտի կենսունակության վրա COVID-19-ի ազդեցության նույնիսկ նախնական գնահատականները հնարավորություն են տալիս հավաստելու, որ խնդրո առարկա վարակի ընդգրկման ծավալներն աննախադեպ են, իսկ հետևանքներն՝ աղետալի:

Հատուկ նպատակ չունենալով համալիր կերպով գնահատելու համաշխարհային սպորտի վրա համավարակի ազդեցությունն ամբողջական տեսանկյունից[11], այդուհանդերձ, պետք է արձանագրենք, որ մարզաշխարհը դարձավ համավարակի գլխավոր «շահառուներից» մեկը:

Մեկ դիտարկում ևս: Ներկայացված ցուցանիշները վկայում են այն անհամաչափ ու անտրամաբանական վիճակի մասին, որն առկա է համաշխարհային սպորտում: Խոսքը հատկապես վերաբերում է այն մարզաձևերին, որտեղ մարզիկների աշխատավարձն ու ուղեկցող ծախսերը չափվում են տասնյակ միլիոններով (օրինակ՝ ֆուտբոլ, բասկետբոլ, թենիս, ամերիկյան ֆուտբոլ, բեյսբոլ և այլն), խաթարվում է ակումբների գործունեության արդյունավետության չափելիությունը, անառողջ մրցակցության և չհիմնավորված ֆինանսական ներարկումների համատեքստում՝ աղավաղվում մարզական ոգին: Եվ այս ամենը՝ զանգվածային և մանկական սպորտի թերֆինանսավորման պայմաններում...

Թերևս, այս ճգնաժամն ազդակ է նաև համաշխարհային սպորտին՝ վերադառնալու հավասարակշիռ ու ընկալելի վարքագծի...

[11] Հոդվածում անդրադարձ է կատարվել հիմնականում մարզական միջոցառումների կազմակերպիչներին սպասվող վնասներին, սակայն, հեղինակի համոզմամբ, մարզական ակումբների կորուստներն անհամեմատ մեծ են լինելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կորոնավիրուսը և սպորտը. ինչ իրավիճակ է մարզաշխարհում, https://www.shantnews.am/news/view/625877.html
2. Մանուկ Հերգնյան, Նոր տնտեսական իրականությունը և մեր պատասխանը, https://banks.am/am/news/interviews/18854 25.03.2020
3. Մոդել. «վերին կետում» ՀՀ-ում կարող է վարակվել մարդկանց մինչև 4.7 %-ը, https://mediamax.am/am/news/society/37128/
4. Նոր աշխարհի մարտահրավերները. նախկին փոխարտգործնախարար Ռոբերտ Հարությունյան, https://news.am/arm/news/568403.html:
5. Коронавирус остановил большой спорт. Олимпиаду и Евро-2020 могут перенести на год, https://www.bbc.com/russian/features-51860899
6. Coronavirus cancellations and reactions in sports, https://www.espn.com/espn/story/_/id/28871525/coronavirus-cancellations-reactions-sports
7. Coronavirus (COVID-19) disease pandemic effect on the sports industry - Statistics & Facts; Published by Christina Gough, Mar 19, 2020, https://www.statista.com/topics/6098/impact-of-the-coronavirus-on-sport/
8. UEFA postpones EURO 2020 by 12 months, https://www.uefa.com/uefaeuro-2020/news/025b-0ef35fa07210-adb80b5eb2e7-1000--uefa-postpones-euro-2020/
9. https://www.uefa.com/uefachampionsleague/
10. https://ru.investing.com/currencies/usd-jpy

Давид АХВЕРДЯН
Директор исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

КОРОНАВИРУС ПРОТИВ ИНДУСТРИИ МИРОВОГО СПОРТА

В статье в основном проанализированы потери мирового спорта впоследствии коронавируса и была предпринята попытка оценить размер этих потерь. Учитывая объёмный характер отрасли, автор свои исследования сконцентрировал на основных спортивных мероприятиях 2020 года – Олимпийские игры в Токио и чемпионат Европы по футболу. Также были анализированы потери и вызовы национальных чемпионатов по футболу, баскетболу и хоккею с шайбой.

Ключевые слова: *пандемия, мировой спорт, потери, олимпиада, футбол, баскетбол, хоккей*

Davit Hakhverdyan
Director of AMBERD Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

CORONAVIRUS AGAINST WORLD SPORTS INDUSTRY

The article mainly analyzes the losses of world sports in the wake of the coronavirus and an attempt was made to estimate the size of these losses. Given the voluminous nature of the industry, the author concentrated his research on the main sporting events of 2020 - the Olympic Games in Tokyo and the European Football Championship. Also, the losses and challenges of the national football, basketball and ice hockey championships were analyzed.

Key words: *pandemic, world sport, loss, olympiad, football, basketball, hockey*